

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
ԵՎ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ*

Էդ. Մ. ԶՐԱՍՇՅԱՆ

2. «ՄԵՐ ՀՈՅԱԿԱՊ, ՄԵՐ ԱՐՔԱՅԱԿԱՆ...»

(Թումանյանը և Սայաթ-Նովան)

Հովհ. Թումանյանի անունը հատկապես սերտորեն է կապված Սայաթ-Նովայի հետ։ Մի բանաստեղծի, որը պատմականորեն ավարտեց հայ միջնադարյան քնարերգության զարգացման հազարամյա ուղին և միաժամանակ նախապատրաստեց ազգային նոր բանաստեղծության սկիզբը։ Բայց՝ զարմանալի՝ բան. մեր գրականագիտության և հասարակական գիտակցության մեջ, թվում է, ոչ այնքան Սայաթ-Նովան է պետք Թումանյանին հասկանալու և գնահատելու համար, ինչքան հակառակը։ Թումանյանն այնքան մեծ գործ է կատարել Սայաթ-Նովայի անվան և գործի ժողովրդականացման համար, տվել է այնպիսի խոր և ճշմարտացի գնահատականներ, որ այսօր գրեթե անհնար է խոսել Սայաթ-Նովայի մասին, առանց դիմելու այդ ասույթներին։ Թումանյանի դերը 150-ամյա ճանապարհ անցած սայաթնովագիտության մեջ կարելի է համեմատել միայն մեր բանասիրության այդ ճյուղի հիմնադրի՝ Գևորգ Ախվերդյանի դերի հետ։

Իրեր, հիշենք, որ 1852 թ. Ախվերդյանի հրատարակած հայտնի ժողովածուից հետո, որը Սայաթ-Նովայի իսկական գրական հայտնագործությունն էր, մեծ երգիչն ավելի քան կես դար դեռ մնում էր կիսամոռացված վիճակում։ Հատուկենտ հրապարակումներից ու հոդվածներից զատ նրա երգերի վերաիմաստավորման փորձեր չեն արվում։ Նվ այսպես շարունակվում է մինչև 1910-ական թթ. սկիզբը, երբ Սայաթ-Նովայի ծննդյան 200-ամյակի առթիվ Թումանյանն իր ղեկավարած Հայ գրողների կովկասյան ընկերության ամբիոնից և «Հորիզոն» թերթի էջերից բազմիցս բարձրացնում է մեծ երգչի հիշատակը հավերժացնելու, նրան ճանաչելու և ըստ արժանվելուն գնահատելու խնդիրը։ Ծիշտ է, Սայաթ-Նովայի շիրմին մահարձան կանգնեցնելու հարցը մամուլում առաջին անգամ բարձրացրել էր նկարիչ Գևորգ Բաշինջադյանը։ Սակայն Թումանյանն այդ խնդրին այնպիսի լայն հասարակական հնչողություն հաղորդեց, որ Սայաթ-Նովայի երկրորդ վերածնունդն ամենայն իրավամբ և ամենից ավելի նրա անվան հետ է կապվում։

Սայաթ-Նովայի մասին Թումանյանի հոդվածների ու ելույթների ընդհանուր թիվը հասնում է քսանի։ Թեև ծավալով դրանք մեծ չեն և կազմում են մի ոչ մեծ գրքույկ¹⁸, բայց այն, առանց չափազանցության, մի ամբողջ մեծագրության կշիռ ունի։ Թումանյանի գնահատականների շնորհիվ Սայաթ-Նովան գիտակցվեց իբրև համազգային և համակովկասյան մեծություն, իսկ նրա ստեղծագործությունը դարձավ գիտական լուրջ քննությունների նյութ։ Թումանյանի նշանավոր չափածո ձևից հետո («Խաղով եկավ, ախով գնաց

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1891, № 1։

¹⁸ Տե՛ս նվարդ Թումանյանի կազմած ժողովածուն՝ «Հովհ. Թումանյան. Սայաթ-Նովա», 1945, ինչպես նաև նույն գրքի վերահրատարակությունը՝ որոշ փոփոխություններով (1963, խմբագիր՝ Ա. Ինճիկյան)։ Թումանյանի քաղվածքները, բացի հատուկ նշվածներից, բերվում են գրքի 1945 թ. հրատարակությունից, որն ավելի լրիվ է։

Սայաթ-Նովան) շատ հայ բաժնատերերին՝ սկսած Եղիշ Զարեցից, սրբա-
տառու իրերից նվիրեցին նրան:

Շատ վաղ է մտել Սայաթ-Նովան Թումանյանի գիտակցության մեջ:
Նվարդ Թումանյանը հիշյալ ժողովածուի վերջաբանում գրել է. «Այդ սերը
Թումանյանի սրտում զարթնել է պատանեկական օրերին՝ 1881—1883 թվա-
կաններին, երբ դեռևս 2-րդ դասարանի աշակերտ էր Զալալօղլու դպրոցում
(այժմ Ստեփանավան)»։ «Քնար հայկականի» էջերում կարդում է Սայաթ-
Նովայի երգերը, կարդում է, սիրում և իր ընկերների համար Թիֆլիսի Բար-
բառից վերածում է գրականի: Խոսքը վերաբերում է Միքայել Միսասար-
յանի կազմած հայտերի ժողովածուին (1868), որի մեջ տեղ են գտել Սա-
յաթ-Նովայի լավագույն երգերից վեցը. «Ուստի՞ դուրս, դարիբ բըլ-
բուլ...», «Դուն էն գլխեն իմաստուն իս...», «Արի ինձ անգաճ կալ...», «Ա-
ռանց քիզ ի՞նչ կոնիս...», «Արի համով դուրս աբա...», «Բըլբուլի հիդ
լաց իս էլի...»: Ավելի ուշ՝ Ներսիսյան դպրոցում սովորելու ժամանակ, ան-
կասկած, Թումանյանի ձեռքն է ընկել Գ. Ախվերդյանի կազմած ժողովածուն,
որը և մեծապես ընդլայնեց Սայաթ-Նովայի իմացության շրջանակները: Իսկ
երբ դարավերջին կազմակերպվեց «Վերնատունը», Սայաթ-Նովան դարձավ
խմբակի անդամների մշտական հետաքրքրության առարկան: Այդպիսի կողմ-
նորոշման համար, բացի Թումանյանի վաղեմի նախասիրությունից, կա-
րևոր դեր խաղաց խմբակի մի ուրիշ անդամ՝ Նիկոլ Աղբալյանը: Լինելով
բնիկ Թիֆլիսցի, կատարելապես տիրապետելով տեղի բարբառին և հիա-
նալի զգալով ու կատարելով Սայաթ-Նովայի երգերը, Ն. Աղբալյանն այս
գործում դարձավ Թումանյանի լավագույն զինակիցը: Նա էր, որ Հայ գրող-
ների ընկերության հավաքույթին (1913 թ. մարտի 14-ին) կարգաց առա-
ջին զեկուցումը Սայաթ-Նովայի մասին, ակտիվորեն մասնակցեց շատ ուրիշ
ձեռնարկումներին: Տարիներ անց Ն. Աղբալյանը գրեց «Սայաթ-Նովայի հետ»
մեծարժեք աշխատությունը՝ երգչի մի շարք խաղերի մանրակրկիտ բանա-
սիրական քննությամբ, որպիսին կարող էր կատարել միայն նա:

«Վերնատուն» սայաթնովյան հրապուրանքի և գործերի մասին վկայել
են նաև խմբակի մյուս անդամները: Ավ. Իսահակյանն իր հուշերում գրել
է. «Մեր բոլորի սիրածն էր Սայաթ-Նովան, որին բարձրացրինք հանճար-
ների դասին, ունեցանք պաշտամունք նրա հանդեպ, մեր բոլոր խնջույք-
ներում երգում էինք նրա տաղերը, որոնք գրեթե մոռացված էին: Վստահ
կարող ենք պարծենալ, որ մենք վերակենդանացրինք նրան, տարածեցինք
նրա համբավը և արժարժեցինք նրա երգերը» (ԹԺՀ, 11—12): Իսկ Դ. Դե-
միրճյանն ավելացնում է. «Այդ տարիներին էր, որ «գտնվեց» Սայաթ-
Նովան: «Գտնողը» Աղբալյանն էր: Նա երգում էր Սայաթ-Նովայի այն եղա-
նակները, որ այժմ տարածված են ամենուրեք: Բայց այնուհետև Սայաթ-
Նովային վեր հանեց և քաղաքացիական իրավունք նվաճեց Թումանյանը:
Զեկուցումներ, զրույցներ, հանդեսներ—այս բոլորը Թումանյանի ղեկներն
էին, որով ժողովրդականացնում էր նա Սայաթ-Նովային» (ԹԺՀ, 37):

Կանգ շենք առնի 1913—1914 թթ. Թումանյանի ղեկավարությամբ կազ-
մակերպված բազմազան ձեռնարկումների վրա: Այդ մասին առատ նյութ
կա Թումանյանի հոգվածներում և ելույթներում, ժամանակակիցների հու-
շերում, գիտական ուսումնասիրությունների մեջ¹⁹: «Սայաթնովյան շաբժու-

19 Տե՛ս Հովհ. Թումանյանի «Սայաթ-Նովա» ժողովածուի նշված երկու հրատարակու-
թյունները, ժամանակակիցներից Ստեփան Զորյանի, Մարգար Ավետիսյանի, Գարեգին Լե-
վոնյանի և ուրիշների հուշերը (ԹԺՀ, էջ 116—117, 185—186, 443—444 և այլն): Ըստ
Սուրենյան Հովհաննիսյանի «Սայաթ-Նովայի արժեքավորման սլաոմությունից» հոգվածի
(«Սովետական գրականություն», 1987, № 10, էջ 92—100) տվյալների՝ Սայաթ-Նովայի ստեղ-
ծագործության և նրա հիշատակի հավերժացման հարցերը քննարկվել են Հայ գրողների

մը» նախապատերազմյան տարիների հայ գրական-հասարակական կյանքի նշանակալի երևույթներից մեկն էր, որի արժեքը դուրս եկավ բանաստեղծի հիշատակը հարգելու սահմաններից, դարձավ ազգային գիտակցության, կովկասյան ժողովուրդների միջև վստահություն և հարգանք արձարծելու գործուն միջոց:

Սայաթ-Նովայի մասին Թումանյանի գրածների մեջ պետք է տարբերել երկու կողմ կամ շերտ:

Մեկը այդ նյութերում առկա մասնավոր հարցադրումներն ու հոգսերն են: Իհարկե, այսօր դրանք մեծ մասամբ գրական-պատմական արժեք ունեն: Բայց և ինչքան հետաքրքիր են՝ շոշափելիորեն տեսնելու համար Թումանյանի նկարագրի սի քանի բնորոշ գծեր՝ հասարակական ակտիվ գործունեության ջիղը, մարդկանց մի գեղեցիկ նպատակի համար ոգեշնչելու, համախմբելու ունակությունը և, որ ամենից կարևոր է, սեփական անձն ու ծառայությունները երբեք չցուցադրելու առաքինությունը: Վերջինիս պերճախոս օրինակ է 1913 թ. սեպտեմբերին «Հորիզոն» թերթում տպագրված փոքրիկ նամակը: Այստեղ Թումանյանն առարկում է թերթի նախընթաց նյութերից մեկի մեջ հայտնված այն մտքին, ըստ որի Սայաթ-Նովայի մահարձանը կանգնեցվում է իր՝ Թումանյանի ճառանձնակի ջանքերով: «Պետք է ասեմ,— հայտնում է բանաստեղծը,— որ ինչ-որ կատարվել է, կատարվել է հավաքական ջանքերով: Նույն նամակում նա անվերապահորեն մերժում է նաև մեծ երգչի շիրմաքարի վրա իր հայտնի բանաստեղծության տողերը («Սիրով եկավ, սըրով գընաց Սայաթ-Նովան») փորագրելու առաջարկը (գալթակղիչ առաջարկ, որից շատերը կոճվարանային հրաժարվել): Թումանյանը գտնում է, որ դա «միանգամայն ավելորդ է և հենց Սայաթ-Նովայի իրեն երգերից մի երկու տող կգրվի իր արձանի վրա»: Ինչպես հայտնի է, այդպես էլ եղավ. 1914 թ. մայիսի 15-ին բացված մահարձանին փորագրվեցին Սայաթ-Նովայի «Դուրս էս գըլխեն իմաստուն իս...» երգից մի բանի տող («Ամեն մարթ չի կանա խըմե՛ իմ ջուրն ուրիշ ջրեն է...»):

1913 թ. դեկտեմբերին Գրողների ընկերության երեկոյին Թումանյանը զեկուցում կարդաց՝ «Սայաթ-Նովան—Դավիթ հպիսկոպոս և առաջնորդ Հաղպատա թեմի» վերնագրով: Զեկուցման մեջ առաջադրվեց այն ենթադրությունը, որ պատմական մի շարք վավերացրած հիշատակվող հաղպատցի Դավիթ հպիսկոպոսը եղել է նույն ինքը՝ աշխարհիկ կյանքից հեռացած Սայաթ-Նովան: Այդ վարկածը հենց այն ժամանակ առարկությունների հանդիպեց, իսկ հետագայում՝ առհասարակ մերժվեց, քանի որ ուրիշ գրավոր աղբյուրներից հայտնի դարձավ, որ Հաղպատում Սայաթ-Նովան ծառայել է Ստեփանոս քահանա անվան տակ: Սակայն անկախ կատարված ենթադրության հավաստիության աստիճանից, զեկուցումն օգնեց պարզաբանելու Սայաթ-Նովայի կենսագրության որոշ մութ էջեր, մերձենալու նրա ապրած հոգեկան բարդ դրամայի ըմբռնմանը: Ըստ զեկուցման լրագրային շարադրանքի, խոսելով աշխարհիկ կյանքից Սայաթ-Նովայի հարկադրյալ հեռացման մասին, Թումանյանն ավելացրել է. «Եվ ահա էստեղ էլ վրա են հասնում օրերի «Հին աստվածները» ու բացվում է մեր առջև հայոց մեծ գուսանի կյանքի ու հոգու մեծ դրաման...»: Լեոն Շանթի դրամայի հիշատակությունը, որը նույն այդ օրերին համընդհանուր հետաքրքրություն էր շարժել հայ իրականության մեջ, շատ բան էր բացատրում Սայաթ-Նովայի հոգու պատմությունից:

1915—1917 թթ. Թումանյանը մի քանի անգամ մամուլում հանդես եկավ Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների մասին: Առիթը Վալերի Բրյուսովի խմբագրած հայտնի ժողովածուն էր, որի մեջ զետեղված թարգմանությունները Թումանյանն ամենայն բժախնդրությամբ համադրել

կովկասյան ընկերության 23 նիստերում ու հավաքներում, իսկ միայն «Հորիզոն» թերթն այդ հարցերին անդրադարձել է մոտ 40 անգամ:

է բնագրերի հետ, ցույց է տվել նրանց մեջ տեղ գտած որոշ անճշտություններ: Անշուշտ, պատահական չէ, որ Բրյուսովի և ուրիշ ռուս բանաստեղծների կատարած բազմաթիվ թարգմանություններից Թումանյանն անդրադարձավ հատկապես ուշ միջնադարի երկու մեծ երգիչներին՝ Նահապետ Քուլակին և Սայաթ-Նովային: Դա հայ միջնադարի գրական ժառանգության ներկատմամբ նրա հատուկ հետաքրքրության վկայությունն է: Առաջարկված ճշտումները, առանձին բառերի շուրջ Պ. Մակինցյանի և ուրիշների հետ վարած բանավեճը ցույց են տալիս, թե Թումանյանը պատասխանատվության ինչ բարձր գիտակցությամբ և բանասիրական ինչ խոր գիտելիքներով էր մոտենում այդ խնդրին:

Թումանյանի սայաթնովյան նյութերի մյուս շերտը այն խորիմաստ գնահատականներն են, որոնք, միասին վերցրած, տալիս են մեծ երգչի ստեղծագործության ամենախոր մեկնաբանություններից մեկը: Ինչպե՞ս էր գնահատում Թումանյանը Սայաթ-Նովային, ո՞րն էր նրա պատմագեղարվեստական մեծության թումանյանական ըմբռնումը: Պայմանականորեն մի պահ մասնատենք այդ ըմբռնումը և ներկայացնենք մի քանի կետով՝ երբեմն խախտելով նաև Թումանյանի ասույթների ժամանակագրական կարգը:

Մեծ երգչի ստեղծագործության և անձնական ողբերգական վախճանի մեջ Թումանյանը տեսնում էր հայ ժողովրդի պատմական ճակատագրի մարմնավորումն ու յուրօրինակ խորհրդանիշը: Նրան շատ էր ոգևորել Վալերի Բրյուսովի այն խոսքը, թե Հայաստանի պոեզիան հայ ժողովրդի ազնվականության լավագույն վկայականն է, և, իբրև այդ մտքի լավագույն հաստատում, նա առաջին հերթին հիշում էր Սայաթ-Նովային, որն իր անձի մեջ կրել է ազգային բանաստեղծական հանճարն ու ժողովրդի ողբերգական ճակատագիրը: Նահապետ Քուլակի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների մասին 1915 թ. վերջին գրած հոդվածը Թումանյանն ավարտում էր այսպես. «...Թող իմանան, որ «եթերային բարձունքները» երբեք խորթ ու անմատչելի չեն եղած հայի հոգուն, որ հայի հանճարն էլ է միշտ սավառնացել էն վսեմ, էն սուրբ ու նուրբ ոլորտներում, թեև նա ինքը՝ հայր միշտ լողացել է արյան ծովի մեջ, ահա ճիշտ էնպես, ինչպես մի Սայաթ-Նովա»: Իսկ դրանից ընդամենը մի քանի շաբաթ անց՝ 1916 թ. հունվարին գրած «Հայոց պատմությունը» հոդվածում, Թումանյանն այսպիսի մի պատմական զուգահեռ է անցկացրել. «Եվ ինչո՞ւ չի կարելի Սայաթ-Նովային նկատել որպես հայ ժողովրդի կյանքի ու տանջանքի խորհրդանշանը—նրա պատմությունը, Հանճարի կնիքը ճակատին, քրիստոնեության խաչը ձեռքին, դաշույնը սրտի մեջ»: Զուգահեռ, որը հիմք է տալիս բանաստեղծին նորից արժարժեցնելու հայ ժողովրդի արյունոտ պատմության խնդիրը և խոսքն ավարտելու այսպիսի կոչով. «Բայց պետք է ճանաչել Սայաթ-Նովային ու ծանոթացնել աշխարհքին, որ ամենքն էլ համոզվեն, թե չի կարելի հավիտյան թողնել էդ դաշույնը նրա սրտում»:

Շատ կարևոր են Թումանյանի դիտողությունները մեծ երգչին ծնած ու ձևավորած անկրկնելի պատմաաշխարհագրական միջավայրի մասին: «Երկու մեծ թիֆլիզցիներ» հոդվածում (1913) այդ հարցի մասին խոսելիս Թումանյանը, կարելի է ասել, զուգակցել է գիտական խոր հայացքն ու կենդանի պատկերի նկարչական գունագեղությունը: Ե՛վ Ստեփանյանի, և՛ Սայաթ-Նովայի ժառանգության ճշմարիտ ըմբռնման բանալին նա տեսնում է հին Թիֆլիզի մեջ, որի «հարազատ լեզվով, շնչով, հոգով» ստեղծագործել են նրանք: Իսկ հին Թիֆլիզի բնութագիրն սկսվում է հետևյալ տպավորիչ խոսքերով. «Էն մի առանձին, յուրատեսակ աշխարհ էր, որի մեջ եկել միացել էին կովկասյան ժողովուրդներն ամենքն իրենց առանձնահատուկ կյանքով ու երանգով և հորինել էին ազգերի մի վերին աստիճանի գրավիչ ու հե-

տաքերակա՛ն խառնուրդ ու կյանք: Ծվ որովհետև էդ կյանքին տո՛ն տվողը վրացական անհոգ ու զվարթ ոգին էր, էդ պատճառով էլ հին Թիֆլիզը իրար խորթ տարրերի էտնոգրաֆիական մի ժողովածու չէր հանդիսանում, այլ մի ուրախ հարսանքատուն, ուր հրավիրված էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը—քեֆ քաշելու»:

Ահա այդ միջավայրն է սենեկ Սայաթ-Նովայի բանաստեղծական հանճարը, այստեղից են գալիս նրա լուսավոր թախիծն ու լայնախոհ մարդասիրությունը: Հին Թիֆլիզն է պայմանավորել նրա պոեզիայի համակովկասյան բնույթը՝ անդրկովկասյան երեք ժողովուրդների լեզուներով ստեղծագործելու հանգամանքը, որը եզակի և անկրկնելի երևույթ է նույնիսկ համաշխարհային գրական չափանիշներով: «Անգիտակից թշնամիներ» հոդվածում (1913) Թումանյանը Սայաթ-Նովային կոչել է «համակովկասյան երգիչ», որը «հավասար թանկ է կովկասյան բոլոր ազգությունների համար» (VI, 200—201): Ահա թե ինչու, ասում էր Թումանյանը նույն թվականին գրած մի այլ հոդվածում, Սայաթ-Նովայի պոեզիան «մեր աշխարհքի հարազատ շնչի նման միշտ խաղալու է Կովկասի ժողովուրդների վրա», դիմելու է նրանց սիրո և արդարության պատգամներով:

Սայաթ-Նովայի երգերում բացարձակորեն գերակշռող տիրալիքն մոտիվների մեջ Թումանյանը շատ լայն, համամարդկային բովանդակություն է տեսել: Նա Սայաթ-Նովային անվանել է «մի հոյակապ սիրահար, բռնված ու բռնկած սիրո հրդեհով», ուրիշ առիթներով՝ «դժբախտ սիրո մեծ երգիչ», որի խաղերում անգերազանց ուժով և անկեղծությամբ մարմնավորվել են «մերժված սիրո իսկական հառաչանքն ու տառապանքը»: Ուշագրավ է հատկապես այն միտքը, ըստ որի Սայաթ-Նովան «սիրո լույսի տակ էլ նրկատում է աշխարհքն ու իրերը»: Սերն իր ամենալայն և խոր ըմբռնումով, ըստ Թումանյանի, Սայաթ-Նովայի ամբողջ աշխարհագրոգությունն ելակետն ու՝ չափանիշն է, նրա երգերում տիրապետող մարդասիրական մթնոլորտի հիմքը: Այստեղից է բխում այն, որ բոլոր տառապանքներից հետո էլ մեծ երգիչը միշտ «մնում է արի ու բարի, անշար ու անաշու, վեհ ու վսեմ, որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը». և այն, որ նա թեև «ղայրացավ, բայց երբեք չլարացավ, ցավեց, բայց երբեք չանիծեց»: Այսպիսի երգչի գերեզմանն անգամ, ասում էր Թումանյանը, «ժպտում է մարդկանց սրտերին մի խոր հավիտենական ժպիտով ու ասես թե կյանքը հաշտեցնում է մահի հետ», «ամբողջովին հաշտություն ու սեր է բուրում»:

Սրանք էին Թումանյանի «սայաթնովապաշտության» հիմքերը, որոնք և մոել են նրան այդքան բարձր գնահատելու մեծ բանաստեղծին: Թումանյանի համոզմամբ՝ Սայաթ-Նովան ժամանակավոր հրապուրանք կամ նորաձևություն չէ, այլ ժողովրդի հոգու հավերժական ուղեկիցն ու թարգմանը, «գեղեցիկ ձևի մեջ մի մշտավառ հուր հոգի է նա, մի ազնիվ ու լիքը սիրտ, մի հարազատ հզոր շունչ»: Ժողովրդի հոգևոր կյանքում Սայաթ-Նովայի դրաված բացառիկ տեղը բնութագրելիս Թումանյանը դիմում է այնպիսի գերադրական մակդիրների, ինչպես՝ վիթխարի, անզուգական, մի ամբողջ ժողովրդի պարծանք, անմահ ու անմահ, վերջապես՝ «մեր հոյակապ, մեր արքայական Սայաթ-Նովան»: Ծրեի հնարավոր չէ ավելի բարձր գնահատել որևէ բանաստեղծի...

Սայաթ-Նովային նվիրված փոքրիկ բանաստեղծությունը, որ Թումանյանը գրեց 1913 թ., եղավ մեծ երգչի խտացված, տարողունակ գնահատականը և զարդարեց նրա մեծարժան հանդիսությունները: Այստեղ գերազանցորեն արտահայտվել են Թումանյանի ոճի անօրինակ հակիրճությունը, մեկ բառով՝ «մի ամբողջ աշխարհ» բացելու ունակությունը: Բանաստեղծությունն ամբողջովին հիմնվում է բովանդակությամբ հակադիր, բայց հնչյունական կազմով նման (հանգավորվող) բառերի զուգադրման վրա: Դրանք միաժամանակ մարմնավորում են պոեզիայի և կյանքի, բանաստեղծի և ժամանակի անհաշտելի հակադրությունը: Գեղարվեստական

խոսքի վսեմ առաքելությամբ կյանք մտած բանաստեղծը աշխարհից հեռացավ ցավով ու տառապանքով («Խաղով եկավ, Ախով գնաց Սայաթ-Նովան», Երգով եկավ, Վերքով գնաց Սայաթ-Նովան), սիրո մեծ պատվի-
 քաններով մարդկանց դիմող բանաստեղծը դարձավ արյունոտ սրի զոհ («Սիրով եկավ, Սրով գնաց Սայաթ-Նովան»)։ Սակայն ի վերջո նա հաղթեց ու անմահացավ հենց իր մարդասիրական մեծ ոգով («Սիրով մնաց Սայաթ-Նովան»)։

Թումանյանի մյուս բանաստեղծությունը լայն ընթերցողին ավելի քիչ է հայտնի, ու թերևս անհամոզիչ թվա նրա մեջ Սայաթ-Նովայի գնահատա-
 կան տեսնելու։ Իրոք, այդ տողերում, որ 1917 թ. բանաստեղծը գրել է իր դուստր Անուշի ալբոմում, նա իր իսկ ճակատագրի և տառապանքների մա-
 սին է խոսում, իսկ Սայաթ-Նովան հիշատակում է միայն որպես համե-
 մատության եզր, ստանում է, այսպես ասած, անդրադարձված գնահատա-
 կան։ Բայց ինչքան խոր, որոշակի իմաստով՝ սպառիչ գնահատական է դա-
 րձերենք բանաստեղծությունն ամբողջությամբ։

Կանցնեն օրերն, Անուշ ջան,
 Կանցնի քո հերն, Անուշ ջան,
 Ու կրտանի իրեն հետ
 Իր ցավն ու սերն, Անուշ ջան։
 Ժավը՝ անտակ ծովի պես,
 Սերը՝ անհագ սովի պես.
 Մովի միջին ու սովի՝
 Անբախտ Սայաթ-Նովի պես։

Սայաթ-Նովան անհատական և ազգային ցավի ու սիրո, տառապանքի
 ու տենչանքի բարձրագույն չափանիշ է, — այս է հավաստում Թումանյանը
 չափածո ձևով՝ գրեթե բառացի կրկնելով 1915 թ. իր հոգվածի՝ մեզ արդեն
 ծանոթ խոսքերը. «Հայր միշտ լողացել է արյան ծովի մեջ, ահա ճիշտ էն-
 պես, ինչպես մի Սայաթ-Նովա»։

Իսկ ինչպե՞ս են արտահայտվել սայաթնովյան ավանդույթները Թու-
 մանյանի ստեղծագործության մեջ։ Շատ գայթակղիչ, բայց և սայթաքուն
 ուղի է՝ բացում այս հարցը, քանի որ կարելի է հեշտությամբ «ազդեցու-
 թյուններ» հայտնաբերել այնտեղ, ուր պարզապես երևան են գալիս երկու
 բանաստեղծների աշխարհազգացողության և գեղարվեստական նկարագրի
 ընդհանուր գծերը։ Սայաթ-Նովայի ներգործությունը Թումանյանի վրա եր-
 բեք արտաքին ցցուն ձևերով չի արտահայտվել։ Վերցնենք, օրինակ, նրա
 կիրառած աշուղական տաղաչափական ձևերը (գազել, մուսամմազ, թեչ-
 նիս, դիվանի և այլն)։ XX դարի սկզբին այդ ձևերը, առաջին հերթին Սայաթ-
 Նովայի շնորհիվ, թափանցեցին արևելահայ բանաստեղծության մեջ, նրանց
 հետևությունները բազմաթիվ գործեր գրեցին նույնիսկ Տերյանն ու Չարենցը՝
 իրենց գեղարվեստական սկզբունքներով Սայաթ-Նովայից բավական հե-
 ոու կանգնած բանաստեղծներ։ Այնինչ Թումանյանը, որը, թվում է, իր ժո-
 ղովրդական մտածողությամբ և գեղարվեստական նախասիրություններով
 պետք է հակված լիներ դեպի աշուղական տաղաչափության ձևերը, դրանց
 օգնությունը երբեք չի դիմել։ Փառյակների առկայությունը մեղ չպետք է
 շփոթեցնի։ Թեև նրանց մեջ Թումանյանը կիրառել է աշուղական պոեզիայի
 հանգավորման և բառական կրկնության սկզբունքները հիշեցնող ձևեր,
 բայց դրանք պայմանավորված էին այդ արևելյան ժանրի ավանդույթով և
 ոչ թե հատկապես Սայաթ-Նովային հետևելով (վերջինս հայերեն քառյակ-
 ներ, իբրև ինքնուրույն ժանր, չի գրել)։

Կամ՝ համեմատենք Սայաթ-Նովայի և Թումանյանի բանաստեղծական
 ոճերը։ Դժվար չէ նկատել, որ վերջինս որևէ չափով տուրք չի տվել աշուղա-
 կան պոեզիայի համար գրեթե պարտադիր ծաղկուն, շքեղ ոճին։ Նա չի գնա-

ցել ոճավորման ուղիով, իր լեզվի մեջ Թիֆլիսի բարբառի ինչ-ինչ տարրեր չի ներմուծել: Մի բան, որ այնպիսի վարպետությամբ հետագայում կիրառեց Նղիշի Զարենցը իր «Տաղարանում»:

Նմանապես ճիշտ չէր լինի Թումանյանի մոտ որոնել Սայաթ-Նովայի հիմնական բանաստեղծական մոտիվի՝ սիրային երգերի մեջ արտահայտված տրամադրությունների ինչ-ինչ արձագանքներ: Մերժված, դժբախտ Վերո տառապանքը, սիրունուն ուղղված խնդրանքի, հորդորի կամ հանդիմանության խոսքերը, որոնք առատորեն սփռված են Սայաթ-Նովայի երգերում, ամենեւին բնորոշ չեն Թումանյանի սիրային քնարերգությանը, որն, ի դեպ, այնքան էլ մեծ տեղ չի գրավում նրա պոեզիայում: Սայաթ-Նովայի երգած սիրային հույզերի զուգահեռներ ավելի շուտ կարելի է գտնել Ավետիք Իսահակյանի բանաստեղծություններում:

Սայաթ-Նովան ներգործել է Թումանյանի վրա ոչ թե ձևական կամ թեմատիկ հատկանիշներով, այլ իր ոգու և աշխարհազգացողության էական գծերով, կյանքի փիլիսոփայությամբ, մասնավորապես՝ աշխարհի և մարդու նկատմամբ խորապես հումանիստական հայացքով: Այդ բոլորով Սայաթ-Նովան անպայման մասնակցել է Թումանյանի ստեղծագործական աշխարհի ձևավորմանը՝ ուսումնառության շրջանում, նրա խորացմանն ու բյուրեղացմանը՝ հասուն տարիներին: «Մեծ բանաստեղծների հոգեկցությունը», — Թումանյանագետ Արամ Ինժիկյանն այսպես է վերնագրել իր առաջաբանը՝ կցված Հովհ. Թումանյանի «Սայաթ-Նովա» ժողովածուի 1963 թ. հրատարակությանը: Եվ, կարծում ենք, տվյալ դեպքում դա ամենից ճիշտ մոտեցումն է, որը ենթադրում է բացահայտել երկու բանաստեղծների հոգեկան հարազատության եզրերը, իբրև գրական ավանդույթի շարունակման օրինակով արդյունք:

Թումանյանի ստեղծագործության «սայաթնովյան շերտերը» կարելի է համախմբել երկու հիմնական առանցքի շուրջ, որոնք երկու բանաստեղծներին էլ էապես բնորոշ են. աշխարհիկ կյանքի ու փառքի ունայնության, անցողիկության գաղափարը և մարդկանց բաժիք անելու հումանիստական քարոզը: Անշուշտ, և՛ մեկը, և՛ մյուսը Սայաթ-Նովայից շատ առաջ էլ բազմազան ձևերով արտահայտվել են գրականության, մանավանդ արևելյան պոեզիայի մեջ: Այդ գեղարվեստական և իմաստասիրական ավանդույթը նկատի առնելով Թումանյանը Սայաթ-Նովային անվանել է «արևելքի բանաստեղծ», նշել է, որ նա աշխարհին նայում է «արևելքի մեծ բանաստեղծներին հատուկ փիլիսոփայությամբ»: Եվ հենց Սայաթ-Նովան եղավ այն հիմնական աղբյուրներից մեկը, որի միջոցով Թումանյանն ընկալեց ու նորոգեց արտահայտեց կյանքի և աշխարհի մասին այդ հնագույն իմաստությունները:

Իր հոգվածներում ու ելույթներում Թումանյանը հաճախ է մեջ բերել Սայաթ-Նովայի հետևյալ տողերը, որոնք երկրային կյանքի անցողիկության մասին են խոսում.

Աշխարհս ո՞ւմն է մընացի, որ ինձ ու քիչ մընա, զոգալ...

Աշխարհըս քունն ըլի, ի՞նչ պիտի տանի...

Սա Սայաթ-Նովայի մշտական խոհերից մեկն է, որ նա արտահայտում է իր եռալեզու ստեղծագործության բոլոր մասերում: Բերենք մի քանի օրինակ: Հայերեն խաղերից. «Չուն աշխարհս է անցողական», «Աշխարհս միզ մընալու չէ՝ իմաստնասիրաց խաբարով», «Աշխարհս միզ մընալու չէ՝ մալ անիլուն ինչի՞ն է շահ»: Վրացերեն խաղերից²⁰. «Աշխարհն իմը լինի»:

²⁰ Այստեղ և հետագայում վրացերեն և ադրբեջաներեն խաղերից կատարվող քաղվածքները, բնագրի իմաստին ավելի մոտ մնալու նպատակով, բերում ենք ոչ թե գեղարվեստական, այլ տողացի թարգմանություններից, որ կատարել են Հ. Բախլիյանը և Ն. Գևորգյանը հետևյալ գրքում. Սայաթ-Նովա. Խաղեր (լիակատար ժողովածու). Երևան, 1987:

իմ ինչի՞ն է պետք», «Աշխարհում փառք ու հռչակ չեմ ուզում»։ Ադրբեջաներեն խաղերից. «Հեռու մնա շար Սատանայից, արհամարհիր փառք, ունեցվածք», «Չի մնա քեզ աշխարհը, հարստություն, ապարանք», «Իմացողի համար էս աշխարհը երազ է», «Աշխարհս ո՞ւմն է մնացել, ո՞ւմ ինչ կմնա և այլն»։

Դժվար չէ նկատել, թե այս բոլորն ինչքան հարազատ է Թումանյանի, աշխարհագրացողությունը, որի հիմնական սկզբունքներից. մեկը արտահայտվել է հայտնի քառյակում.

Հե՛յ ազա՛հ մարդ, հե՛յ անգո՛հ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,

Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզից առաջ, ջո առաջ.

Ի՛նչ են տարել ներանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ։

Չի կարելի շատաբերել նաև «Թմկաբերդի առումի» իմաստուն խոհը. «Անց են կենում սիր ու խնդում, գեղեցկություն, գանձ ու գափ...», կամ «Վայրէջքի» քնարական հերոսին, որն էր բարոյակա՛ն քարծուներից հրաժարվում և արհամարհում է (նորից հիշենք), «և՛ փառքը, և՛ գանձ, և՛ քեն, և՛ նախանձ—ամենը, ինչ որ ճընշում է հոգին»։

Երկու բանաստեղծների ժառանգությունից շատ տողեր կարելի է համադրել, որոնք զարմանալիորեն համահնչուն են իմաստով և տրամադրությամբ։ Այսպես, Թումանյանը մի քանի անգամ վկայակոչել է համընդհանուր սիրո, բարության և գթության այն պատվիրանները, որոնք հնչում են Սայաթ-Նովայի երգերում. «Ա՛ստված սիրե, հո՞թի սիրե, յա՛ր սիրե... Ա՛ղ-կատ սիրե, դո՛նաղ սիրե, տա՛ր սիրե», «Աստված ղիփունանցըն մին հոթի էրիտ», «Սերը սեր կու բերե» և այլն։ Թումանյանի համար ևս սերը,— իր ամենալայն ու վե՛հ ըմբռնումով,— ամեն լավ բանի հիմքն է։ Նա համոզված է, որ աշխարհում «ինչ որ լավ բան լինելու է, լինելու է սիրով, սրով— երբեք»։ Եվ նրա երազած ապագան էլ հիմնված է լինելու համընդհանուր և ամենազոր սիրո վրա,— գուցե անիրագործելի, բայց բարձր-գեղեցիկ մի պատրանք. «Անսահման աշխարհ, և սեր ընդհանուր, եվ մարդը ուրախ, և երգ ամենուր» («Բարձրից»)։ Այդ կյանքը նա պատկերացնում է ոչ այլ կերպ, քան «լիքը սիրով, ծաղկով, երգով», ուր իշխելու են «անվերջ սերը, անհատ բարին» («Ոսկի քաղաք»)։ Հիշեցնենք, որ վերջին արտահայտությունը տարիներ անց բառացի կրկնվեց նաև «Իմ երգը» բանաստեղծության մեջ, որի քնարական հերոսի հոգում ևս «սերն անվերջ է, բարին՝ անհատ»։

Շատ հարազատ են Թումանյանին նաև Սայաթ-Նովայի ըմբռնումները բանաստեղծի կոշման մասին։ Նրան ոգևորել է իր երգով անձնվիրաբար ժողովրդին ծառայող «խալխի նոքարի» կերպարը, որը հանդես է գալիս միայն օրհնանքի խոսքերով, արդարի և գեղեցիկի պատվիրաններով, անդամ շարունակ և զրկանքների դիմաց բարիք է պարգևում մարդկանց, Թումանյանը շատ է սիրել և բազմիցս վկայակոչել է Սայաթ-Նովայի այս տողերը.

Աշուղի լիզում բըլբուլ է, օրհնանք ունե, նալաթ չըկա...

Ով քիզի լիզի պարբեվե, դուն տու շաբար, Սա՛յաթ-Նովա...

Սա ստեղծագործ անհատի այլասիրական այն նվիրումն է, որը և նրա համար հոգեկան բարձրագույն վայելքի աղբյուր է դառնում։ Այդ հոգեբանությունը բազմիցս արտահայտվել է նաև Թումանյանի պոեզիայում։ Հիշենք նրա քառյակների տողերը. «Իմ զայրույթը լիքն է սիրով», «Ի՛նչքան ցավ եմ տեսել ես, Նենգ ու դավ եմ տեսել ես, Տարել, ներել ու սիրել,— Վատը՝ լավ եմ տեսել ես», «Ո՛նց է ժըպտում իմ հոգին Չարին, բարուն,— ամենքին» և այլն։ Կամ՝ արդեն հիշատակված «Իմ երգը» բանաստեղծության քնարական հերոսը վերուստ ստացած իր հոգևոր գանձերը «աշխարհ-

բով մին ... շաղ է տալիս իր բարձունքից՝ անվերադարձ հանձնելով մարդկանց: Ինչպես տեսնում ենք, այս բոլոր դեպքերում յուրովի հանդես է դալիս կենսական և հոգեբանական այն հակասությունը, որ Թումանյանից շատ առաջ արտահայտել էր նաև Սայաթ-Նովան՝ օրհնանքի և անեծքի, դառնություն և քաղցրության բառական հակադրությամբ: Թումանյանը ևս համոզված է, որ պոեզիայի ոգուն համապատասխանում է ոչ թե անեծքը, չարի քարոզը, այլ օրհնանքը, բարու սերմանումը: Այդ պատճառով էլ Սայաթ-Նովան նրա համար բանաստեղծի իդեալ էր (նորից հիշենք նրան տրված բնութագիրը. «Չայրացավ, բայց հերքեք չարացավ, ցավեց, բայց հերքեք չանիծեց»): Եվ ահա թե ինչու նա երազում էր, որ ապագա Հայաստանի բանաստեղծները, արդեն նոր կյանքի թելադրանքով, չպղծեն «իրենց շուրթերն անեծքով», այլ օրհնեն հայրենիքի վերածնությունը «նոր երգերով, նոր խոսքով»:

«Սայաթ-Նովայի երգերի բնավորությունը» հոդվածում (1913) Թումանյանը երկու քաղվածք է բերել (մեկական տողից) նաև թուրքերեն խաղերից, որոնք այն ժամանակ ոչ տպագրված էին, ոչ էլ թարգմանված հայերեն: Անշուշտ, Թումանյանը դրանք վերցրել է Սայաթ-Նովայի ձեռագիր դավթարից, որը հենց այդ ժամանակ երգչի ժառանգները հանձնեցին Հայ դրողների ընկերությանը՝ անձամբ Թումանյանին, իսկ վերջինս 1921 թ. հանձնեց Հայաստանի թանգարանին: Դավթարում հայերեն տառերով գրված թուրքերեն խաղերը Թումանյանը կարդացել է՝ հենվելով այդ լեզվի իր որոշ իմացության վրա (գուցե նաև դիմելով ուրիշների օգնությանը): Հոդվածում այդ տողերը մեջ են բերվում բնագրով և ապա թարգմանաբար: Ահա նրանց թարգմանությունը.

Աշուղությունը հնոց է. կերի, կավերի:

Սիրահարված, սաղը ձեռին նվազող է Սայաթ-Նովան²¹:

Առաջին քաղվածքի իմաստն այն է, որ աշուղի (բանաստեղծի) կոչումը ենթադրում և պահանջում է լիակատար ինքնանվիրում, նույնիսկ իրեն զոհաբերելու պատրաստակամություն: Այս առիթով պետք է նշել, որ թուրքերեն խաղերում Սայաթ-Նովան բազմիցս հիշում է կրակի մեջ այրվող Փարվանա թիթեռնիկի այլաբանական պատկերը, իբրև բանաստեղծական, ներշնչանքի և նվիրումի խորհրդանիշ²²: Մի պատկեր-գաղափար, որը շատ սիրելի ու բնորոշ էր Թումանյանին ոչ միայն իբրև «Փարվանա» բալլադի հեղինակի, այլև մի բանաստեղծի, որը նույնպես ինքնազոհաբերման, այրման մեջ էր տեսնում ժողովրդին ծառայելու ճամարիտ ուղին: Նույն 1913 թ. գրած մի այլ հոդվածում Թումանյանն այդ գաղափարին տվել է թեմատիկ խոսքի տեսք. «Էսպես է. ով ուզում է լուս տա—պետք է էրվի»²³: Մի քանի տարի անց նա այդ միտքն արտահայտեց մի քառյակի մեջ, որը ոչ միայն ինքնակենսագրական խոստովանություն է, այլև բանաստեղծի կոչման և ճակատագրի բարձր-գեղարվեստական ընդհանրացում. «Փանի՜ ձեռքից եմ վառվել, վառվել ու հուր եմ դառել, Հուր եմ դառել՝ լույս տրվել, լույս տալով եմ ըսպառվել»:

Երկու բանաստեղծներին համադրելիս չի կարելի մոռանալ Սայաթ-Նովայի մի ողբերգական խոստովանությունը.

²¹ Ժամանակակից տողացի թարգմանությամբ այդ տողերը հնչում են այսպես. «Աշուղությունը հնոց է, այրվում-վառվում է», «եթե չարված, սաղը ձեռքին նվազում է Սայաթ-Նովան»,— ինչպես տեսնում ենք՝ Թումանյանի թարգմանությանը. շատ մոտ (տե՛ս «Եռադերի» նշված հրատարակությունը, էջ 141, 285):

²² Տե՛ս Խաղեր, էջ 137, 163, 165, 188, 215, 229, 297 և այլն:

²³ «Հորիզոն», 3 նոյեմբերի 1913, № 248:

Ումրբըս էրազի պես գընաց՝ ծառըս լըխերած զիգենաք:

Սա ստեղծագործող անհատի դժգոհությունն է իր ճակատագրից և իր կատարածից, այն համոզմունքը, թե ինքն իր տաղանդով կոչված էր շատ ավելին անելու: Ցավագին մի ապրում, որը, ինչպես տեսանք, դեռ նարեկացին է ունեցել: Այդ տրամադրությունը բազմիցս արտահայտվել է նաև Թումանյանի ստեղծագործության, մանավանդ քառյակների մեջ: Հիշենք.

Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ,
Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վրոագ եղավ, անցկացավ.
Վրոագ անցավ երազ, մութագ, ու լըհասա ոչ մեկին,
Կյանքըս թեթև տանուլ տրված գըրագ եղավ, անցկացավ:

Կամ՝

Կյանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խոփան, խոպան ու անպըտուղ, անցավ առանց արդյունքի:

XVIII դարի բանաստեղծը տառապում է իսկական ընկերոջ, բարեկամի բացակայությունից.

Սայաթ-Նովեն առանց նընդիր ճիղը գըցած լալ է ուզում:

Նրան աւեր ուղղակի արձագանքում է Թումանյանը.

Ո՞ր լըբին սիրես, կյանքըդ նըվիրես,
Էլ ի՞նչպես ապրես անսեր, անընկեր ...

Այդպիսի մի բանաստեղծական «փոխկանչ» է նաև այն օրինակը, որ բերել է Մ. Ավդալբեգյանը իր հիշյալ հոդվածում (ՈՒՀ—2, էջ 56): Խոսքը վերաբերում է 1921 թ. գրած քառյակներից մեկին.

Առատ, անհատ՝ Աստծու նըման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես.
Հոգիս ծարավ՝ սըրան-նըրան մըտիկ տալուց հոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շըռայլ անհաշիվ,
Ամեն ճամփում ըսպասելուց ու փընտրելուց հոգնել եմ ես:

Այս քառյակում երեք անգամ հանդես եկող կրկնագրը՝ «հոգնել եմ ես», իրոք ստիպում է վերհիշել Սայաթ-Նովայի սրտակտուր հառաչները. թաղերումն են բեզարիլ իմ, վաղերումն են բեզարիլ իմ, խազերումն են բեզարիլ իմ և այլն: Իսկ քառյակի 3-րդ տողը զուգահեռ է ծնում Սայաթ-Նովայի մի ուրիշ տողի հետ. «Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շըռայլ անհաշիվ» — «Ինչո՞ւ չէլավ լըռաստ էկար մե լավ յարին, Սայաթ-Նովա»:

Մի ուրիշ զուգահեռ էլ մատնանշել է գրականագետ Խորեն Սարգսյանը՝ մանրամասնորեն համադրելով Թումանյանի «Իմ երգը» Սայաթ-Նովայի հայերեն «Գուգիմ ումբըս հենց սնց կացնիմ՝ օրըս մունաթ լըքաշե...» և մանավանդ թուրքերեն «էշիսի ծովի միլեն հանած լալ ու գոհար է բիռըս...» տաղերի հետ²⁴: Մեջ բերենք միայն երկուական տող Սայաթ-Նովայի հիշյալ տաղերից.

Անտակ ծովի միլեն հանած ակնի ունիմ՝ լալ ու թիւա.
Մարքարիտըս շաղա-շաղա՝ շարըս մունաթ լըքաշե:

Մյուս քաղվածքը տալիս ենք տողացի թարգմանությամբ.

Սիրո ծովից է հանած, լալ ու գոհար է բեռս,
Սիպտակ, կանաչ, խաս ու ղումաշ, ղալամբար է բեռս ...

²⁴ Խորեն Սարգսյան. Սայաթ-Նովա, 1963, էջ 63—70.

Այս տողերն, իրոք, շատ են հիշեցնում Թումանյանի բանաստեղծության սկիզբը.

Դանձեր ունեմ անտա՛կ, անձե՛ր,
 Եւ հարուստ եմ, ջա՛ն, եւ հարուստ,
 Մով լարութիւն, շքեղո՛րք ու սեր
 Զոխ պարզեւ եմ առել վերուստ:

Երկու բանաստեղծներն էլ խոսում են ոչ թե նյութական, այլ հոգևոր գանձերի մասին, որ նրանք պատրաստ են ամբողջությամբ նվիրաբերել մարդկանց: Որպես լրացուցիչ փաստարկ ավելացնենք, որ թուրքերեն մի ուրիշ խաղի մեջ Սայաթ-Նովան դարձյալ խոսում է իր ունեցած գանձերի մասին, որ աշխարհիկ փառքն ու հարստությունը արհամարհող բանաստեղծը կարող էր հասկանալ միայն հոգեկան առաքինությունների իմաստով.

Սիրով լի խանութ եմ բացել, սիւմ ու շարքա՞ք գնողը դա,
 Նրա համար եմ խենթացել՝ դարակները զոհարով են ի,
 Զարմանալի տեղում է բացված էս սրտի քաղաքի շուկան:

Հովհ. Թումանյանը սայաթնովյան ավելի լայն հետաքրքրություններ ու ծյադեր ունեն, քան նա հասցրեց իրագործել: Խոսենք երկու փաստի մասին:

1916 թ. Շեքսպիրի մասին սեւագիր հոգվածում Թումանյանն այսպիսի մի դիտողություն ունի. «Սոնետի մեջ նա գանգատվում է իր դերասանական վիճակից, որ արհամարհված մի վիճակ էր էն ժամանակ, մի խոսքով՝ մի խալիսի նոքար, ինչպես մեր Սայաթ-Նովան է ասում իրեն համար, որ ուրիշներին շատ է ուրախություն տալիս, բայց իրեն համար քիչ ուրախություն կա»: Այստեղ էլ տողատակի ծանոթագրության մեջ Թումանյանն ավելացնում է. «Մի ուրիշ անգամ ցույց եմ տալու, թե ինչքան նման գծեր կան Շեքսպիրի սոնետների ու Սայաթ-Նովայի երգերի մեջ» (VI, 155): Դժբախտաբար, այս խոստումը անկատար մնաց: Բայց ինչ վերաբերում է Թումանյանի նշած օրինակին, ապա, ամենայն հավանականությամբ, նա նկատի է ունեցել Շեքսպիրի 111-րդ սոնետը, ուր նա խոսում է իր «նզովյալ արհեստի» մասին, դժգոհում է ճակատագրից, որ դատապարտել է իրեն դերասանի թափառական կյանքի և հանրային ողորմության: Այդ խոստովանությունը Թումանյանը զուգադրել է Սայաթ-Նովայի այն տողերի հետ, ուր նա իրեն ժողովրդի ծառա («խալիսի նոքար») է անվանել, հորդորել է կյանքի բոլոր դառնությունների դիմաց մարդկանց միայն քաղցրություն պարգևել («Ով քիզի լիդի պարբիվե, դուն տու շաքար, Սայաթ-Նովա»):

Շեքսպիրի և Սայաթ-Նովայի համադրության մյուս եզրերը մեզ հայտնի չեն, թեև, ինչպես ենթադրել է նվարդ Թումանյանը, թերևս այդ կապակցությամբ են թարգմանվել մի շարք ասույթներ Շեքսպիրի սոնետներից (տե՛ս VI, 79—80): Սակայն ավելորդ չէ նշել, որ իր այդ չիրագործված համադրությամբ Թումանյանն ազդել է հետագա ուսումնասիրողների վրա, որոնք փորձել են կոնկրետ զուգահեռներով ցույց տալ Շեքսպիրի և Սայաթ-Նովայի նմանությունները՝ քնարական տրամադրությունների և պատկերների ոլորտում: Դրանով կարծեք լրացվում է Թումանյանի նշած, բայց չիրականացրած խնդիրը²⁵: Իհարկե, դժվար է ասել, թե այդ համեմատությունները

²⁵ Պարույր Սևակը հատուկ հոգված է նվիրել այդ հարցին. «Շեքսպիր և Սայաթ-Նովա (Հովհ. Թումանյանի հետքերով)». տե՛ս Շեքսպիրական, հ. 2, Երևան, 1967, էջ 120—129: Այդ հոգվածի շարադրանքը մտել է նրա մենագրության տարբեր մասերի մեջ (տե՛ս Պարույր Սևակ. Սայաթ-Նովա. Երևան, 1969, էջ 227—232, 435—441): Շեքսպիր—Սայաթ-Նովա մի քանի ուրիշ ընդհանրությունների մասին տե՛ս Վաչե Նալբանդյան. Սայաթ-Նովա. Երևան, 1987, էջ 161—162, 166—167, 177—178:

ինչ, չափով են համապատասխանում Թումանյանի նկատած նմանություններին: Բայց մի բան անվիճելի է. Շեքսպիրի և Սայաթ-Նովայի միջև Թումանյանը տեսնում էր այնպիսի ներքին ընդհանրություններ, որոնք հարազատ էին նաև իր բանաստեղծական խառնվածքին, և որոնցով պայմանավորված էր նրա բացառիկ սերը և՛ մեկի, և՛ մյուսի նկատմամբ:

Թումանյանի ստեղծագործական կենսագրության մյուս սայաթնովյան դրվագը մեծ գուսանի երգերի լեզուն որոշ չափով գրականացնելու փորձն է, որով նա զբաղվել է ոչ միայն Զալալօղլու դպրոցում սովորելու ժամանակ (այդ մասին, ինչպես տեսանք, գրել է նվարդ Թումանյանը), այլև կյանքի վերջին շրջանում: Այդ աշխատանքի հետքերը պահպանվել են Սայաթ-Նովայի հայերեն խաղերի՝ 1914 թ. Հայ գրողների լեկկերության հրատարակած օոշուճածուի էջերի վրա²⁶, Այստեղ Թումանյանը տարբեր գույնի մատիտներով մի շարք խաղերի բարբառային լեզուն մեղմել-գուակալարել է, աշխատել է մոտեցնել իր ժամանակին, բայց երբեք չընկնելով չափազանցության մեջ և չխախտելով Սայաթ-Նովայի լեզվական համակարգը:

Կատարված աշխատանքի բնույթը պատկերացնելու համար այստեղ ամբողջությամբ բերում ենք ժողովածուի առաջին բանաստեղծությունը՝ նշանավոր «Թամանչան» (որն, ի դեպ, ամենից շատ փոփոխությունների է ենթարկվել), Թումանյանի մտքած լեզվական շտկումներով.

Ամեն սագի մեղքն զոված դո՛ւն թամամ տասն իս, բամանչա,
Գնուծ մարթր քեզ չի՛ տեսի՝ դուն նրա պտան իս, բամանչա,
Ձանք առա՛ է՛լ լավ օրէրու էդիվն հասնիս, բամանչա,
Դ՛ով կարա քեզ ինձից խելի՛ աշուղի բտեն իս, բամանչա:

Մեղաճրդ արծաթից պիտի, դ՛ուքսրդ զոհարով բարան,
Խելրդ ի՛դո՛ կրթից պիտի, փորրդ սագափով նաւը ուր,
Սիմրդ օոկէն քեզած պիտի, էրկաթրդ փանջալա տրուս,
Ոչ ով զինրդ չի հասկանում՝ լայ ու ալման իս, բամանչա:

Ճիպտորդ ոսկեզօծ պիտի՝ տեսք ունենա հագար ոտնդով,
Ջարբը հրեղէն ձիւղ պիտի՝ վար դուն խոսիս բարբ հաւառ,
Շաւին դաւթի՛ կու լաւագնիս, տալին կու քրնէնիս բաւգո՛ւ,
Մնուշահամ զինով լիւրն դո՛ւն սակի՛ թատն իս, բամանչա:

Ս՛ողիդ էրկու կու շինիս, առաջ շայի, դափա ուղիս,
Գոռ ուր կրգաս ալվանումըն, պարապ վախտի ոտիս գուղիս,
Ի՛նչ կնքեսս հանդիսումը՝ քաղցրը քե՛ք ու սափիս գուղիս,
Դ՛ուքրքրդ սիրուններ շարած՝ մեղիքի կ'ան իս, բամանչա:

Շատ արխուր սիրտ կու խրնդացնիս, կու կրտիս հիվրնդի դողը,
Լիք քաղցրը ձայնրդ վիր կանիս՝ բաց կույի հիզրդ խազդը,
Խալխին էն շնորհքը ցույց տուր՝ ասեն, «Ապրի բու ածողիս»,
Ի՛տի՛ դէռ կու Սայաթ-Նովան, շատ բտն կու տ'անիս, բամանչա:

26 Տե՛ս ԳԱԹ, ԹԳ, Ա՝ 1359, Տարբեր չափի ուղղումներ են կատարվել նաև իսկ խաղերի մեջ (նշվում են առաջին բառերն ու զրքում տաղերի դասավորության համարները). Ա. Ամեն սագի մեղքն զոված, Գ. Արի ինձ անդաճ կալ, Ե. Մեն խոսկ ունիմ իլթիմադով, Ը. Դուն էն զլսեն իմաստուն իս, Ժ. Ուստի՛ դուքաս, դարիլ բլրուլ, ԺԳ. Ինձ ու իմ սիրեկան յարին, ԺԴ. Էնդուր աշկրս չէ ցամարում, ԺԸ. Աշխարումրս ախ չիմ քաշի, Ի. Ի՛նչ կոնիմ հերիմըն, ԻԵ. Թամամ աշխար պրտուտ էկա, ԻԶ. Դուն էն հուրին իս, ԼԱ. Էշխրն վառ կրակ է, ԼԴ. Աշխարս՝ մն վանջարա է, ԼԶ. Էշխմմեն էնպես վառվիլ իմ: Կատարված փոփոխությունների նկարագրությունը (յոնև ոչ լրիվ) տե՛ս Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանը, Դիրք 1, Երևան, 1987, էջ 416—421:

Մենք մեկ առ մեկ չենք նշի, թե ինչ բառեր ու ձևեր է փոխել Թումանյանը: Ընթերցողը կարող է համեմատել ընթերցողի հետ և ասել զու: Բայց ասենք, որ սա, իհարկե, ամբողջական ե. ավարտված աշխատանք չէ, կարելի է նկատել որոշակի լեզվական անհետացողականություն: Բայց ընդհանուր առմամբ այստեղ երևում է Թումանյանի ծրագրած գործի հիմնական ուղղությունը:

Իսկ ինչ նպատակով է ձևոնարկվել այս անսովոր աշխատանքը: Որքանով է այն արդարացված լեզվափոխության կամ գեղագիտական առումներով: Այս հարցերին կարելի է տարբեր պատասխաններ ապր, բայց մի բան անվիճելի է. Թումանյանը որոնում էր ուղիներ, որով կարելի լիներ Սայաթ-Նովայի ստեղծագործության իմաստն ու ոգին առավելագույն չափով մոտեցնել ժամանակակից ընթերցողին, մի ինդի, որին ինչ-որ չափով խանգարում է նրա բարբառային լեզուն, օտար բառերի առատությունը: Այդ պատճառով էլ Թումանյանի ձևոնարկած դործը՝ Սայաթ-Նովայի լեզվի որոշ գրականացման խնդիրը, չի կարելի համարել մտացածին մի բան, քմահաճույթի խաղ: Այն ունի օրյնկտիվ հիմքեր, և վաղ թե ուշ, մեծ երգչի գործի ընկալումների ընթացքում, կարծում ենք, նորից կանգնելու է բանասիրության առջև:

Թումանյանից հետո անցած տասնամյակներին Սայաթ-Նովայի համբավն ու փառքը շեշտակիորեն մեծացան: Նրա անունը մասվ համաշխարհային քննարկության խոշորագույն դեմքերի շարքը: Նրա նկատի և սանդածագործության ուսումնասիրությունը զարժավ հայ գրականագիտության ամենից հարուստ, մշտապես հասարակական լայն հետաքրքրություն հարուցող բնագավառներից մեկը: Այդ բոլորի մեջ առաջնակարգ դեր է խաղացել և շարունակում է խաղալ Հովհաննես Թումանյանը: Իր իմաստուն խոսքով նա լուսավորում է «մեր հոյակապ, մեր արքայական Սայաթ-Նովայի» պայծառ դիմապատկերը, նրա «անմաշ և անմահ» երգի անսպառ խորքերը:

ТРАДИЦИИ АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ЛИТЕРАТУРЫ И ОВ. ТУМАНЯН

Академик АНА Э. М. ДЖРБАШЯН

Резюме

В статье (начало в № 1 журнала) исследуются художественные элементы, воспринятые Ованнсом Туманяном от армянских средневековых авторов. Здесь особенно выделяются три писателя, отношение к которым стоит в центре внимания автора работы. Это, во-первых, отец армянской историографии Мовсес Хорепаци (V век), книга которого была одним из источников, питавших эпическую поэзию Туманяна. Еще в 1894 г. он посвятил специальную работу выяснению одного из самых трудных мест «Истории Армении» Хоренаци. Глубокие творческие связи тянутся от Туманяна к великому поэту X века Григору Нарекаци. Его поэма «Книга скорбных песнопений» была предшественницей многих тем и идей поэзии Туманяна—вселенские охваты, частые обращения к Богу-творцу, раскрытие всесторонних связей человека с природой, соотношения жизни и смерти, природы поэтического дарования. Названные мотивы, а также многие общности гуманистических идей двух поэтов иллюстрируются текстуальным анализом. Третья фигура, с которой Туманян был связан особенно тесно,—Саят-Нова (XVIII век), завершивший развитие армянской средневековой поэзии. Туманян обращался к нему неоднократно—и как исследователь его жизни и творчества, тонкий интерпретатор его песен, и как организатор массовых мероприятий по увековечению его памяти. Особенно интересны поэтические образы, которыми Туманян как-бы перекликался со своим великим предшественником. Главное в них—широкий гуманистический взгляд на мир, на человека, отказ от мирской славы и богатства, проповедь добра и любви.